



# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՒ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են մարդկային կապիտալի տեսության ծագման սոցիալ-տնտեսական նախադրյալները: Քննարկվում են մարդկային կապիտալի էության վերաբերյալ տարրեր տնտեսագետների մոտեցումներն ու բնորոշումները: Հատկապես շեշտադրվում են մարդկային կապիտալի առանձնահատկությունները: Ըստ հեղինակի առաջ քաշած նոր մոտեցման՝ մարդկային կապիտալի վրա երկար ժամանակահատվածում և մակրոմակարդակում չի տարածվում նվազող հասույցի օրենքը:

**Հիմնաբառեր.** մարդկային կապիտալ, ֆիզիկական կապիտալ, մարդկային կապիտալում ներդրումներ, նվազող հասույց, աճող հասույց

JEL: A1, O15, J24

Մարդկային կապիտալի հայեցակարգի ձևավորման հիմքում կապիտալի էության վերաբերյալ ավանդական պատկերացումների վերահմաստավորումն է: Միևնույն ժամանակ, դա տարրեր տնտեսագիտական դպրոցների ձեռքբերումների համարդրությունն է: XX դարի ամերիկացի տնտեսագետ Ի. Ֆիշերի գաղափարներից ծնվեց, այսպես կոչված, ազգային հարստության և կապիտալի ընդլայնված մեկնաբանության հայեցակարգը, համաձայն որի կապիտալ է համարվում այն ամենը, ինչը համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝

1. որոշակի ժամանակահատվածում ապահովում է եկամտի որոշակի հոսք, ընդ որում, ցանկացած եկամուտ դիտարկվում է որպես կապի-

- տալի որևէ տեսակի արդյունք<sup>1</sup>,
2. կարող է ձևավորվել ներդրումների արդյունքում,
  3. ունի ինքնաճելու հատկություն:

Ելելով Վերը նշվածից՝ մարդկային ունակությունները, գիտելիքներն ու հմտությունները տնտեսագիտության տեսության մեջ մեկնաբանվում են որպես կապիտալի յուրահատուկ տեսակ, քանի որ՝

1. Յուրաքանչյուր անհատի անբաժան հարստությունն են:
2. Անհատի կյանքի ընթացքում ապահովում են եկամտի հոսք: Ընդ որում, կապիտալի այս տեսակն իր տիրոջը բերում է ոչ միայն դրամական եկամուտներ, այլ նաև լուրջ ոչ դրամական օգուտներ՝ կյանքի որպես բարելավում, հասարակության սոցիալական կառուցվածքում որոշակի դիրք և այլն:
3. Մարդկային ունակությունների, գիտելիքների, հմտությունների և փորձի ձևավորման համար մեծ ծախսեր են պահանջվում և անհատից, և ողջ հասարակությունից:
4. Մարդկային գիտելիքները, փորձն ու հմտություններն օժտված են կուտակման հատկությամբ և որոշակի պաշար են ներկայացնում:

Կապիտալի և ազգային հարստության ընդլայնված հայեցակարգի կողմանակից է նաև ամերիկացի տնտեսագետն Զ. Քենդրիկը, որը կապիտալը բնորոշում է որպես «որոշակի ժամանակահատվածում արդյունք և եկամուտ ստեղծելու ունակություն՝ ներառյալ նաև եկամտի ոչ շուկայական ձևերը»<sup>2</sup>: Նման մեկնաբանությունից ելելով՝ ազգային հարստության բոլոր տարրերը, որոնք կուտակվում, օգտագործվում են արտադրության մեջ և ապահովում որոշակի եկամուտ, դիտարկվում են որպես կապիտալ: Դա, իր հերթին, թույլ է տալիս ամբողջը բաժանել երկու մասի՝ մարդկային կապիտալի և ոչ մարդկային կապիտալի<sup>3</sup>:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն «մարդկային կապիտալ» եզրույթի բազում բնորոշումներ: Ըստ Հ. Բոուենի՝ մարդկային կապիտալը բաղկացած է ծերթերովի գիտելիքներից, հմտություններից, էներգիայից և շահադրությունից, որոնք կարող են օգտագործվել որոշակի ժամանակահատվածում՝ ապրանքների և ծառայությունների արտադրության նպատակով<sup>4</sup>: Է. Զ. Դոլանը մարդկային կապիտալը բնորոշում է որպես «ֆորմալ կրթության կամ փորձի միջոցով ձեռք բերված մտավոր ունակություններ»<sup>5</sup>: Լ. Թուրոուն, ամփոփելով մարդկային կապիտալի Վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները, նշում է. «Մարդկային կապիտալը ապրանքներ և ծառայություններ արտադրելու մարդկային ունակություններն են»<sup>6</sup>: Մարդկային ունակությունների մեջ Լ. Թուրոունը նշգծում է գենետիկական առանձնահատկությունները, որոնք ներդրումների արդյունք չեն, սակայն մեծապես պայմանավորում են մարդկային կապիտալում կատարվող ներդրումների արդյունավետությունը:

<sup>1</sup> Stiu Fisher I., The Nature of Capital and Income, London, "Macmillan ", 1927, էջ 5–87:

<sup>2</sup> Կենդրիկ Ջ., Совокупный капитал США и его формирование, М., "Прогресс", 1978, с. 8–27.

<sup>3</sup> Stiu Shultz T., Investment in Human Capital // The American Economic Review, vol. 51, N 1, 1961:

<sup>4</sup> Stiu Bowen H. R., Investment in Learning, San Francisco, Jossey-Bass, 1977, էջ 362:

<sup>5</sup> Долан Э. Дж., Линдсей Д. Е., Рынок: микроэкономическая модель, СПб., "Печатный двор", 1992, с. 260.

<sup>6</sup> Turow L., Investment in Human Capital, Belmont, 1970, p. 15.

Գ. Բեքերը «Մարդկային կապիտալ» աշխատության մեջ տարբերակում է «առանձնահատուկ մարդկային կապիտալ» և «ընդհանուր մարդկային կապիտալ» հասկացությունները: Առանձնահատուկ մարդկային կապիտալն ընդգրկում է վերապատրաստման ընթացքում ծեռք բերված գիտելիքներ և հմտություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում միայն այն կազմակերպության համար, որտեղ դրանք օգտագործվում են<sup>7</sup>:

Ուստի հեղինակներից Վ. Ն. Կոստյուկը, զարգացնելով էվոլյուցիոն տեսության հայեցակարգը, մարդկային կապիտալը բնորոշում է որպես մարդու անձնային հատկանիշներ, որոնք թույլ են տալիս նրան գործել անորոշության պայմաններում<sup>8</sup>: Մարդկային կապիտալի կազմում նա առանձնացնում է ռացիոնալ և ինտուիտիվ (ներընթառողական) բաղադրիչները: Դրանց փոխներգործությունը մարդկային կապիտալի տիրոջը թույլ է տալիս հասնել հաջողության այնտեղ, որտեղ բավարար չէ միայն պրոֆեսիոնալիզմի և գիտելիքների բարձր մակարդակը:

Պետք է նշել սակայն, որ մարդկային կապիտալը ոչ միայն ներդրումների արդյունքում ծեռք բերված գիտելիքների, փորձի և ունակությունների, այլև բնածին և ծեռքբերովի ունակությունների ամբողջություն է: Մարդիկ ծննդյան պահից արդեն իսկ տարբերվում են իրենց գենետիկական հատկանիշներով, որոնք շատ մեծ դեր են խաղում հետագա կյանքի ընթացքում՝ և գիտելիքների ծեռքբերման, և դրանց օգտագործման տեսանկյունից: Վերջին տարիներին հոգեբանների կատարած հետազոտությունները վկայում են, որ «....մտավոր ներուժը, ինչպես և գրեթե բոլոր անձնային հատկանիշները հիմնականում ժառանգվում են: Ընդ որում, ինտելեկտն ունի պոլիգեն հատկություն, այսինքն՝ պայմանավորված է մի քանի գենների համախմբով»<sup>9</sup>: Մտավոր ներուժի ժառանգման փաստն առաջին անգամ նկատեց Ֆրենսիս Գալտոնը 1869 թ. «Տաղանդի ժառանգականությունը», դրա օրենքներն ու հետևանքները» հիմնարար աշխատության մեջ: Իհարկե, դա չի նշանակում, թե ներդրումները մարդկային կապիտալում կարևոր դեր չեն խաղում անհատի գիտելիքների, ունակությունների, հմտությունների և այլնի զարգացման համար: Առանց համապատասխան ներդրումների՝ անգամ գենետիկ լավ հատկանիշներով օժտված անձինք չեն կարող կատարելագործել և զարգացնել իրենց ունակությունները: Պարզապես խնդիրն այն է, որ անհատի բնածին հատկանիշները անհրաժեշտ է դիտարկել որպես մարդկային կապիտալի կարևոր տարր: Բնածին հատկանիշները (առողջություն, ինտելեկտ, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններ) այս հենքն են, որի վրա կառուցվում, ձևավորվում և իրացվում է մարդկային կապիտալը: Այլ կերպ ասած՝ մարդու բնածին հատկանիշները մեծ ազդեցություն են ունենում մարդկային կապիտալում կատարված ներդրումներից ստացվող հատուցի մակարդակի վրա:

Մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնցով տարբերվում են ներդրումների այլ տեսակներից: Դրանք են՝

<sup>7</sup> Տե՛ս Բեկկեր Գ., Человеческий капитал (главы из книг), Воздействие на заработки инвестиции в человеческий капитал. США, "Экономика, политика, идеология", N 11, 1993, էջ 109–119:

<sup>8</sup> Տե՛ս Կոստյուկ Յ., Теория эволюции и социоэкономические процессы. М., Едиториал УРСС, 2004, էջ 120–121:

<sup>9</sup> Փրոլով Ր., 25 фактов о человеческом интеллекте: заявление ведущих экспертов о состоянии дел в современной науке, 2010, электронный ресурс <http://warrax.net/93/10/iq.html>

**1.** Մարդկային կապիտալում կատարվող ներդրումներից ստացվող հաստուցը անմիջականորեն կախված է նրա տիրոջ կյանքի տևողությունից և այն ժամանակահատվածից, որի ընթացքում կատարվում են այդ ներդրումները: Որքան վաղ տարիքին են վերաբերում այդ ներդրումները, այնքան ավելի երկար ժամանակահատվածում են դրանք ապահովում հատուց:

**2.** Մարդկային կապիտալը ենթարկվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Բայց, միևնույն ժամանակ, ի տարբերություն ֆիզիկական կապիտալի, մարդկային կապիտալը օգտագործման ընթացքում կուտակվելու և ինքնաճելու հատկություն ունի: Մարդկային կապիտալի ֆիզիկական մաշվածությունը պայմանավորված է օրգանիզմի բնական մաշվածությամբ, իսկ բարոյական մաշվածությունը՝ գիտելիքների հնացմանը: Մարդկային կապիտալի կուտակումն իրականացվում է աշխատողի ուսուցման, պարբերական վերապատրաստման և փորձի ծեռքբերման ընթացքում, այսինքն՝ որոշակի ժամանակահատվածում, համընկնում է մարդկային կապիտալի օգտագործման հետ: Փաստորեն, օգտագործման ընթացքն ինքնին ապահովում է մարդկային կապիտալի կուտակում՝ փորձի ծեռքբերման ճանապարհով: Նույնը չի կարելի ասել կապիտալի այլ տեսակների մասին:

**3.** Մարդկային կապիտալի կուտակմանը գուգընթաց նրա եկամտաբերությունն աճում է մինչև որոշակի սահման (ակտիվ աշխատանքային գործունեության վերին տարիքային սահման), որից հետո կտրուկ նվազում է: Այսինքն՝ սկսում է գործել նվազող սահմանային հատուցի օրենքը: Բայց նշված օրինաչափությունը բնորոշ է միայն միկրոմակարդակում մարդկային կապիտալում կատարված ներդրումներին, երբ որպես ներդրման օբյեկտ են դիտարկվում առանձին մարդիկ: Եթե մակրոմակարդակում քննարկենք մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, ապա կտեսնենք, որ դրանց վրա չի տարածվում նվազող սահմանային հատուցի օրենքը: Բանն այն է, որ մարդկային կապիտալն անընդհատ վերարտադրվում է, այսինքն՝ ապահովվում է սերնդակիռնության կանոնավոր գործնքացը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ մակրոմասշտաբով մարդկային կապիտալը չի ենթարկվում ֆիզիկական մաշվածության (կամ աննշան է մաշվում), և մարդկային կապիտալում կատարվող ամբողջական ներդրումներն ապահովում են աճող, այլ ոչ թե նվազող հատուց: Վերջին տասնամյակների փորձառական հետազոտությունների արդյունքները (Մ. Թողարո, Փ. Ռոմեր, Ի. Բենհարիք, Ս. Շահգել, Ռ. Նելսոն, Է. Ֆելպս, Գ. Բարո, Հ. Սելա, Գ. Մարտին և այլք) վկայում են այն մասին, որ տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ գործնականում դրսարվում է մաշտարից կայուն կամ աճող հատուց: Այսպէս՝ Մ. Թողարոն նշում է, որ ամբողջ տնտեսության մաշտարվ աճի էնորգեն նորենների փորձարկումը հերքում է նվազող հատուցի օրենքը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մակրոմակարդակում գործում է կապիտալի աճող հատուցը<sup>10</sup>: Փ. Ռոմերը նույնապես չի բացառում, որ ագրեգացված արտադրական գործառույթը կարող է դրսարել մասշտարից աճող հատուց<sup>11</sup>: Բայց դա հնարավոր է միայն գիտական նվազումների և նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում: Նշված հետազոտությունների վերլուծությունը

<sup>10</sup> Տես **Տօդար Մ. Պ.**, Экономическое развитие /перевод с англ. под ред. Яковлева С. М., Зевина Л. З./. М., Экономический факультет МГУ, "ЮНИТИ", 1997, էջ 95:

<sup>11</sup> Տես **Romer P. M.**, Increasing returns and long-run growth, Journal of political economy, vol. 94, No. 5, 1986, էջ 1002–1037:

թույլ է տալիս ենթադրել, որ աճող հատույցը պայմանավորված է ոչ թե ֆիզիկական, այլ մարդկային կապիտալի աճող հատույցով: Պարզապես՝ մարդկային կապիտալի աճող հատույցը հնարավոր է միայն ողջ տնտեսության ծավալով և երկար ժամանակահատվածի առումով: Բանն այն է, որ մարդկային կապիտալը օգտագործման ընթացքում ոչ միայն ինքնածում, կատարելագործվում, այլ նաև փոխանցվում է փորձի փոխանակման, վերապատրաստման և այլնի ձևով: Այսինքն՝ ապահովվում են լուրջ դրական էֆստրանալներ (արտաքին էֆեկտներ): Մարդկային կապիտալի աճող հատույցը ապահովվում է նոր գիտելիքների համարժման, կուտակման, ներդրման և փոխանցման մեխանիզմների միջոցով: Բայց նշված օրինաչափության դրսնորման համար անհրաժեշտ է գիտելիքների կուտակում որոշակի «կրիտիկական» սահմանի վրա, որն ապահովում է տնտեսության թափքածև զարգացում: Կարծում ենք՝ հենց դրանով էլ բացատրվում է աճող հատույցի փաստը՝ տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ: Ն. Դ. Կոնդրատևը իր «Տնտեսական դիմամիկայի հիմնախնդիրները» աշխատության մեջ նշում է. «Ընդհանուր աճը և զարգացումն անշրջելի են, քանի որ դրանց հիմքում գիտելիքի կուտակման անընդհատ գործընթացն է, որի վրա որևէ տնտեսական իրադրություն էական ազդեցություն չի թողնում: Ընդհակառակը՝ գիտելիքի կուտակման ինտենսիվությունը պայմանավորում է տնտեսական կոնյունկտուրան՝ լուծելով տնտեսության զարգացման փուլերի հիմնախնդիրները, ապահովելով, որ տնտեսությունը երբեք մեկ անգամից ավելի չլինի միևնույն մակարդակում կամ փուլում»<sup>12</sup>: Եվ, այս համատեքստում, առաջարկում ենք այն գաղափարը, որ տնտեսության պարուրածև զարգացման հիմքում հենց մարդկային կապիտալի աճող հատույցի ֆենոմենն է: Եթե միավորենք առանձին անհատների մարդկային կապիտալում կատարված ներդրումները և դրանցից ստացվող եկամուտները, ապա, երկորի մասշտաբով, կստանանք մարդկային կապիտալ ներդրումներից եկամուտի կախվածության ֆունկցիա, որն, ըստ էության, կարտահայտի աճող հատույց: Ընդ որում, այդ աճող հատույցի կորը կարող է ունենալ խզումներ՝ պայմանավորված գիտելիքների կուտակմամբ, որոնք, հասնելով որոշակի կրիտիկական սահմանի, հանգեցնում են գիտատեխնիկական հեղափոխությունների: Նշենք, որ երբեմն խզումներ կարող են առաջանալ նաև միկրոնակարդակում, երբ էական տարբերություն է առաջանում մարդկային կապիտալում կատարված ներդրումների և դրանցից ստացվող հատույցի միջև: Այսպես՝ Վան Գոգի, Գոգենի մարդկային կապիտալից ստացվող հատույցը նրանց կյանքի ընթացքում եղել է շատ շնչին (չեն կարողացել վաճառել իրենց կտավները): Այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում գիտելիքի կուտակման և դրա՝ գիտական հեղափոխության վերածման գործընթացի կորը՝ տնտեսական մեծ պարբերաշրջանների կորի համադրմամբ<sup>13</sup>: Այս հայեցակարգի շրջանակներում ենթադրվում է, որ տեխնոլոգիական տնտեսական հայտնագործությունների, արտադրության նոր մեթոդների ներդրման համար որպես հիմք են ծառայում գիտելիքի վճռորոշ զանգվածի ստեղծումը (գիտություն), տարածումը (կրթություն) և արդյունավետ կիրառումը: Եթե տնտեսական կոնյունկտուրայի մեջ պարբերաշրջանների ավարտից հետո սկսվում է ավե-

<sup>12</sup> Կոնդրատյեվ Հ. Դ., Պրоблемы экономической динамики. М., “Экономика”, 1989, с. 62.

<sup>13</sup> Տես Գ. Ի. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 2008, էջ 137:

Ի բարձր մակարդակի պարբերաշրջան, բայց նվազում են անվերարտադրելի ռեսուրսները, ապա գիտելիքի ռեսուրսները, ընդհակարակը, մեծանում են: Նախորդ ժամանակահատվածի գիտելիքը ստանում է նոր կիրառություն և նպաստում նոր գիտելիքների համադրությանը: Գիտելիքների արդյունավետ կիրառության համար անհրաժեշտ է լուրջ ներդրումներ կատարել մարդկային կապիտալում՝ համապատասխանեցնել կրթական ամբողջ համակարգը նոր պահանջներին, ապահովել մարդկային կապիտալում ներդրումների խթանները (ընտանիքի, կազմակերպության մակարդակով), ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ մարդկային կապիտալի արդյունավետ իրացման համար: Այս շղթայի որևէ բաղադրիչի անտեսումը կարող է խախտել նոր գիտելիքների մշակման գործընթացը: Այս գործընթացների արդյունավետությունը, ըստ էության, ապահովում է մարդկային կապիտալից աճող հատույց, քանի որ հենց մարդկային կապիտալն է գիտելիք ստեղծողը, տարածողը և ներդնողը:

**4.** Մարդկային կապիտալի ծևավորման գործընթացում առաջանում է սիներգետիկ փոխներգործության էֆեկտ, երբ ուսման ընթացքում որակապես բարելավվում են ոչ միայն ուսումնառողի մտավոր ունակությունները, այլ նաև ուսուցանողինը:

**5.** Մարդկային կապիտալում կատարվող ներդրումների բնույթի և տեսակների վրա էական ազդեցություն են թողնում երկրի պատմական, ազգային, մշակութային առանձնահատկություններն ու ավանդույթները: Այսպես՝ Երեխաների կողմից մասնագիտության ընտրությունը, կրթություն ստանալու ցանկությունը մեծապես պայմանավորված են կրոնական, էթիկական պատկերացումներով, ընտանեկան ավանդույթներով, ծնողների կրթական մակարդակով և այլն:

**6.** Մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, կապիտալի մյուս տեսակների համեմատությամբ, առավել արդյունավետ են և անհատի, և ողջ հասարակության տեսանկյունից<sup>14</sup>: Այսինքն՝ մարդկային կապիտալից ստացվող հատույցի նորման գերազանցում է ֆիզիկական կապիտալից ստացվող հատույցի նորման:

**7.** Եթե ֆիզիկական կապիտալում կատարվող ներդրումները պայմանավորված են միայն տնտեսական խթաններով, ապա մարդկային կապիտալում կատարվողներն իրականացվում են ոչ միայն տնտեսական խթանների ազդեցությամբ: Դրանք պայմանավորված են ինքնազարգացման ձգտմամբ, ինքնապաշտպանության բնագրով, հոգեբանական և սոցիալական այլ պահանջմունքներով:

### Օգտագործված գրականություն

1. Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն, Եր., <<ԳԱԱ, «Գիտություն»>, 2008:
2. Կենդրիկ Ջկ., Совокупный капитал США и его формирование, М., "Прогресс", 1978.
3. Долан Э. Дж., Линдсей Д. Е., Рынок: микроэкономическая модель, СПб., "Печатный двор", 1992.

<sup>14</sup>Տես Դյալլով Ս. Ա., Основы теории человеческого капитала. Учебное пособие. СПб., Изд-во СПбУЭФ, 1994, էջ 30:

4. Беккер Г., Человеческий капитал (главы из книг), Воздействие на заработки инвестиции в человеческий капитал. США, “Экономика, политика, идеология”, N 11, 1993.
5. Костюк В., Теория эволюции и социоэкономические процессы. М., Едиториал УРСС, 2004.
6. Фролов Р., 25 фактов о человеческом интеллекте: заявление ведущих экспертов о состоянии дел в современной науке, 2010, электронный ресурс <http://warrax.net/93/10/iq.html>
7. Тодаро М. П., Экономическое развитие, /перевод с англ. под ред. Яковлева С. М., Зевина Л. З./. М., Экономический факультет МГУ, “ЮНИТИ”, 1997.
8. Кондратьев Н. Д., Проблемы экономической динамики. М., “Экономика”, 1989.
9. Дятлов С. А., Основы теории человеческого капитала. Учебное пособие, СПб., Изд-во СПбУЭФ, 1994.
10. Fisher I., The Nature of Capital and Income, London, “Macmillan”, 1927.
11. Shultz T., Investment in Human Capital // The American Economic Review, vol. 51, N 1, 1961.
12. Bowen H. R., Investment in Learning, San Francisco, Joossey-Bass, 1977.
13. Turow L., Investment in Human capital, Belmont, 1970.
14. Romer P. M., Increasing returns and long-run growth, Journal of political economy, vol. 94, No. 5, 1986.

## ФИРУЗА МАИЛЯН

Заведующая кафедрой теории экономики АГЭУ,  
кандидат экономических наук, доцент

**Особенности инвестиций в человеческий капитал.** – В статье рассматриваются предпосылки возникновения теории человеческого капитала. Представлены также подходы разных экономистов к определению сущности категории человеческого капитала. Особое внимание уделено особенностям человеческого капитала. В частности, автором предложен новый подход относительно закона убывающей доходности человеческого капитала. Согласно данному подходу на вложения в человеческий капитал на макроуровне и в долгосрочной перспективе не распространяется закон убывающей отдачи.

**Ключевые слова:** человеческий капитал, физический капитал, инвестиции в человеческий капитал, убывающая отдача, возрастающая отдача.

JEL: A1, O15, J24

## FIRUZA MAYILYAN

Head of the Chair of "Theory of Economics" at ASUE,  
Doctor of Economics, Associate Professor

**The Peculiarities of Investments in Human Capital.** – The article presents the socio-economic background of the theory of human capital. The approaches and definitions of different economists on the essence of human capital are also discussed. Particular attention is paid to the discussion of the peculiarities of human capital, in which the author has proposed a new approach, according to which the diminishing returns law is not applied to human capital in the long-term and on the macro-level.

**Key words:** *human capital, physical capital, investments in human capital, diminishing returns, rising returns.*

JEL: A1, O15, J24